

**ՀԱՅԳԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ԿԱՊԵՐԸ 1966-1990 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ռ. Կ.

Հայրենիք-Սփյուռք մշակութային կապերը Յա. Զարոբյանի պաշտոնանկությունից հետո ընդհուպ մինչև Խորհրդային Միության անկումը շարունակեցին զարգացում ապրել: Հարաբերություններն ավելի սերտ էին սփյուռքահայ այն կազմակերպությունների հետ, որոնք չունեին լուրջ տարաձայնություններ խորհրդային քաղաքականության հետ:

Հայաստան-Սփյուռք մշակութային կապերի համակարգումն իրականացնում էր Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն, ղեկավարող դերը ՀԿԿ Կենտկոմինն էր: Այդ կապերի զարգացմանը նպաստում էին Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, Ռամկավար ազատական և Հնչակյան կուսակցությունները, Թեքեյան մշակութային միությունը, Սփյուռքի մի շարք այլ կազմակերպություններ:

Սփյուռքի հետ հարաբերությունները կարգավորվում էին ԽՄԿԿ Կենտկոմից՝ նպատակ հետապնդելով այդ կուսակցության գաղափարախոսությունը աշխարհասփյուռ հայության վրա տարածելու և նրան ղեպի խորհրդային համակարգը կողմնորոշելու: Սփյուռքահայությանը կողմնորոշելով ղեպի Խորհրդային Միություն՝ խնդիր էր դրվում տարբեր երկրներում գործող կոմունիստական կուսակցությունների մեջ սփյուռքահայերի անդամագրմանը: Չպետք է կարծել, թե Խորհրդային Միությունը մտահոգված էր աշխարհասփյուռ հայության ճակատագրով: Այլ հարց է, որ խորհրդահայ ղեկավարությունը իսկապես մտահոգված էր սփյուռքահայության ճակատագրով, և նրա համար, իրոք, կարևորագույն խնդիր էր Սփյուռքի պահպանումը և հետևյալ երկու խնդրի իրականացումը. առաջինը՝ ամեն կերպ նպաստել հայության ներգաղթին, երկրորդը՝ մշակութային նպատակաուղղված քաղաքականություն իրականացնելով՝ պահպանել սփյուռքահայությունը ձուլումից:

Ելնելով այդ խնդիրների իրականացման անհրաժեշտությունից՝ ՀԿԿ համագումարներում գրեթե միշտ քննարկվում էին սփյուռքահայության հետ հարաբերությունների ընդլայնման և ամրապնդման հարցերը:

ՀԿԿ XXV համագումարի հաշվետու զեկուցման մեջ (1971 թ. փետրվարի 25) Ա. Քոչինյանը հետևյալն է ասում. «Մեզ համար կարևոր նշանակություն ունի սփյուռքահայության հետ կատարվող աշխատանքը»<sup>1</sup>:

1966-ից մինչև Խորհրդային Միության անկումը Սփյուռքի հետ մշակութային փոխհարաբերությունները արտահայտվել են մշակութային բընույթի փոխայցելություններով, փառատոներ կազմակերպելով, փոխա-

---

<sup>1</sup> Քոչինյան Ա., Հայաստանի կոմկուսի կենտկոմի զեկուցումը Հայաստանի կոմունիստական կուսակցության XXV համագումարին, Ե., 1971, էջ 79:

դարձ գեղարվեստական գրական հրապարակումներով, մշակութային գործիչների մասնավոր փոխայցելություններով:

Այդ աշխատանքների հիմնական կազմակերպիչը սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն էր: Մեծ էր նաև ՀԲԸ Միության դերակատարումը: Վերջինիս գործունեության ոլորտը տարածվում էր բազմաթիվ հայկական գաղթավայրերում:

Սփյուռքահայ մի շարք շրջանակներ նշել են Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակը: Այդ առթիվ Սփյուռքահայության կոմիտեն արտասահման է առաքում քարոզչական նյութեր, իսկ Հայաստանում տեղի ունենալիք տոնակատարությանը մասնակցելու համար հրավիրում է մեծ թվով սփյուռքահայերի: Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի տոնակատարությանը մասնակցելու համար Սփյուռքի կոմիտեի հրավերով Հայաստան էին ժամանել 701 հյուրեր, որոնցից 500-ը բուլղարահայերի գեղարվեստական ինքնագործ խմբերի ներկայացուցիչներ էին<sup>2</sup>:

Բազմաթիվ սփյուռքահայեր մասնակցում էին նաև Հայաստանի խորհրդրայնացման տարեդարձներին, հայ մշակույթի մեծերի հոբելյաններին և այլ ձեռնարկներին:

Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի երևանյան տոնակատարությանը մասնակցելու համար Հնչակյան կուսակցության պատվիրակության կազմում էին ՄԴՀ կուսակցության կենտրոնական վարչության ատենապետ Հարություն Կուժունին և «Արարատ» օրաթերթի գլխավոր խմբագիր Ժիրայր Նաիրին: Ֆրանսահայ մշակութային միությունը ներկայացնում էր միության գլխավոր քարտուղար Զարեհ Չաքմիշյանը, «Աշխարհ» թերթի խմբագիր Ավետիս Ալիքսանյանը, նկարիչ Ռիշար Ժերանյանը և քանդակագործուհի Դարիա Կամսարականը: Հյուրերի թվում էր նաև արգենտինահայ բանաստեղծուհի Ալիսիա Կիրակոսյանը:

1967 թ. Հայաստանում մեծ հանդիսությամբ նշվում էր մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցի ծննդյան 70-ամյա հոբելյանը: Այս առիթով Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հրավերով Հայաստան են ժամանում սփյուռքահայ գրող Գառնիկ Ադդարյանը, որը լիբանանահայ կոմունիստների «Գրական շրջանակ» կազմակերպության նախագահն էր, Ֆրանսահայ գրողների միության նախագահ Մառի Աթմաճյանը, բանաստեղծ Արամայիս Սրապյանը (ապրում էր Միլանում), ֆրանսահայ արձակագիր Զարեհ Որբունին<sup>3</sup>:

Հայրենադարձության կազմակերպման, Սփյուռքը մայր հայրենիքի հետ կապելու, հայապահպանության, խորհրդահայ մշակույթը քարոզելու նպատակով տարբեր երկրներ էին մեկնում Խորհրդային Հայաստանի կուսակցական, պետական գործիչներ, գրողներ:

1968 թ. ՀԿԿ Կենտկոմի և կառավարության կողմից Իրան է գործուղվում Ալեքսան Կիրակոսյանը: Թեև գործուղման հիմնական նպատակը հայրենադարձության կազմակերպումն էր (նա կարողանում է կազմակերպել Փերիայի գավառի Հազարջրիբ ու Բոլորան գյուղերի ծայրահեղ թըշվառ 8 հազ. հայերի ներգաղթը), բայց որոշակի աշխատանքներ է իրական-

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի Ազգային արխիվ (այնուհետև՝ ՀԱԱ), ֆ. 875, ց. 2, գ. 28, թ. 2:

<sup>3</sup> Նույն տեղում, ֆ. 875, ց. 4, գ. 9, թ. 18:

նացնում նաև Հայրենիք-Սփյուռք մշակութային կապերի սերտացման առումով<sup>4</sup>:

Ալ. Կիրակոսյանն այցելում է Սպահան՝ Նոր Ջուղա: Նրա վկայությամբ, իր այցից ընդամենը մեկ օր առաջ այնտեղ էր եղել մեծատաղանդ երգչուհի Գոհար Գասպարյանը, որի «ելույթները արժանացել էին հասարակության փառահեղ ընդունելությանը, շահի ու նրա տիկնոջ բարձր ուշադրությանն էին արժանացել»<sup>5</sup>:

Չպետք է անտեսել այն հանգամանքը, որ Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները որոշակի սահմանափակող շրջանակի մեջ էին: Անգամ հայրենադարձների նկատմամբ դրսևորվում էր յուրահատուկ վերաբերմունք: Նույն Ալ. Կիրակոսյանը վկայում է՝ արվյանցի մի խումբ հայրենադարձներ իրեն նամակ են գրում և հայտնում, որ դպրոցներից մեկի բարձրագույնների աշակերտներին, երբ էքսկուրսիա են տարել Երևանի ձեռնարկություններից մեկը, հայրենադարձների երեխաներին արգելել են մտնել այնտեղ:

Պարզվում է, որ դա եղել է միութենական հրահանգ, ըստ որի՝ ռազմաարդյունաբերական ոլորտի ձեռնարկություններ սփյուռքահայերի մուտքն արգելվում էր: Իսկ նման վերաբերմունքը հայրենադարձներին ներշնչում էր այն համոզմունքը, որ իրենք Հայաստանի խորթ զավակներն են: Ակնհայտ էր նաև, որ Մոսկվան ավելի շատ հետաքրքրված էր կոմունիստական գաղափարախոսության՝ սփյուռքահայության շրջանում տարածման, քան թե հայ մշակույթի զարգացման, հայապահպանության և մայր հայրենիքում հայության համախմբման խնդիրներով: Պատահական չէ նաև այն, որ հայրենիք այցելած սփյուռքահայ մշակույթի նշանավոր գործիչները ենթարկվում էին խորհրդային անվտանգության մարմինների աշխատակիցների «հատուկ» ուշադրությանը: Ինչպես վկայում է Ալ. Կիրակոսյանը, վերջիններս «փորձում էին «հանձնարարություններ» տալ նրանց: «Մեկ անգամ չէ,- գրում է նա,- որ այդ առիթով իրենց բողոքն են հայտնել Անդրանիկ Ծառուկյանը, Գերսամ Ահարոնյանը, Գառնիկ Ադդարյանը և այլք: Սփյուռքից հայրենիք մասնագիտական վերապատրաստման եկած ուսուցիչներն էլ բացառություն չէին կազմում...»<sup>6</sup>:

Այս ամենի հետևանքով շատ հայրենադարձներ ձգտում էին կրկին թողնել հայրենիքը: Այնուամենայնիվ, Խորհրդային Հայաստանի ղեկավարությունն անում էր կարելին մշակութային առումով կապերի առավել սերտացման համար:

Դրանում քիչ ավանդ չունեն Սփյուռքահայության հետ մշակութա- յին կապի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանը: Վ. Համազասպյանը կոմիտեն ղեկավարում է ստեղծման պահից (1964 թ.) մինչև 1985 թ.: Այնուհետև նրան փոխարինում է Կարլեն Դավլաբջյանը:

Հայաստանում հրատարակվում էր «Սովետական Հայաստան» պատկերազարդ ամսագիրը, որի խմբագիրն էր անվանի բանաստեղծ Վահագն Դավթյանը, որը նաև Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի նախագահի տեղակալն էր:

<sup>4</sup> *Տիւ* Կիրակոսյան Ա., Մայրամուտի շնմին, Ե., 2002, էջ 131:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 134:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 134-142:

1967 թ. Հայաստան են հրավիրվում Կիպրոսի Հանրապետության խորհրդարանի հայ ներկայացուցիչ Պերճ Թիլայանը, Նիկոսիայի քաղաքագլխի տեղակալ Անդրանիկ Աղջյանը, Մելգոնյան կրթական հաստատության տնօրեն Ասատուր Պետյանը, ֆրանսահայ նկարիչ Ջարեհ Մուրաֆյանը, արգենտինահայ ճարտարապետներ Ռոբերտ Տոբաշյանն ու Խորխե Սարգսյանը, Նյու-Յորքից՝ երգչուհիներ Լիլի Չուգասյանը, Լուսին Ամարան և ուրիշներ<sup>7</sup>:

1969 թ. տարբեր միջոցառումների առիթով Խորհրդային Հայաստան են հրավիրվում սփյուռքահայ մշակութային ու հասարակական աչքի ընկնող 165 գործիչներ: Նույն թվի մայիս-հուլիս ամիսներին Երևան են ժամանում ֆրանսահայ մեծանուն նկարիչ Գառզուն (Գառնիկ Ջուլումյան), ՀԽՍՀ ԳԱ արտասահմանյան անդամներ Ջատիկ Խանզադյանը, Միրարփի Տեր-Ներսեսյանը: 1969 թ. հանդիսավոր կերպով նշվեցին Հովհ. Թումանյանի և Կոմիտասի ծննդյան հարյուրամյակները: Այդ առիթներով նույնպես Սփյուռքահայերի հետ մշակութային կոմիտեն մեծ թվով հյուրեր է ընդունում<sup>8</sup>:

Հայաստանի խորհրդայնացման 50-ամյակի առիթով 1970 թ. նոյեմբեր-դեկտեմբերին Հայաստանում էին ՌԱԿ-ի ղեկավար գործիչներ Բարունակ Թովմասյանը, Հայկաշեն Ուզունյանը և Գերսամ Ահարոնյանը:

ՌԱԿ-ի ներկայացուցիչները հանդիպումներ են ունենում Գրողների միությունում, Պարույր Սևակի, Միլվա Կապուտիկյանի, Ջիմ Թորոսյանի, Վազգեն Ա կաթողիկոսի և մշակութային ու կուսակցական գործիչների հետ<sup>9</sup>:

Սկսած 1970 թ.՝ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն ամեն տարի շուրջ մեկ ամիս ժամկետով Հայաստան էր հրավիրում երիտասարդների մի քանի տասնյակ հոգուց բաղկացած խմբեր, որոնք կոմիտեի կազմակերպած դասընթացներում ուսումնասիրում էին հայոց պատմություն, հայոց լեզու և գրականություն: Նրանք սովորում են հայկական երգեր ու պարեր, հանդիպում գիտության և մշակույթի գործիչների հետ: Խորը տպավորությամբ վերադառնալով՝ նրանք նպաստում էին նոր խմբերի՝ հայրենիք այցելելուն<sup>10</sup>:

Այս ամենի նպատակը մեկն էր՝ սփյուռքահայությունը, որքան հնարավոր է, համախմբել մայր հայրենիքի շուրջ: Աշխարհասփյուռ հայության պահպանման մտահոգությամբ էին պայմանավորված նաև հայ մշակութային գործիչների բազմաթիվ այցելությունները համայնքներ:

Սփյուռքահայության հետ մշակութային կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը Փարիզում մասնակցում է 1969 թ. ՀԲԸՄ համագումարի աշխատանքներին, ուր հավաքվել էին 600-ից ավելի պատվիրակներ: Նրանց թվում էին Գառզուն, Վիլյամ Սարոյանը: Բավական խոսուն էր համագումարի փակման օրը Վ. Սարոյանի արտահայտած հետևյալ միտքը. «Պարոնայք և տիկնայք, ես շատ ուրախ եմ, որ այսօր կապիտալիստ և

<sup>7</sup> Մնիքստեյան Ն., Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Ե., 1985, էջ 286-287:

<sup>8</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 17, թթ. 5-6:

<sup>9</sup> Թովմասյան Բ., Հայրենական օրագրություն, Ուլլթեմ, 1994, էջ 84-89:

<sup>10</sup> Սովետական Հայաստան, N 9, 1977, էջ 35:

պրոլետար քով քովի եկած են (մատնացույց արեց Ալեք Մանուկյանին և տողերիս հեղինակին (Վ. Համազասպյանին- Ռ. Մ), որ պատվո սեղանի շուրջ միասին նստած ենք, ուրեմն հայապահպանության գործը աղվոր կըլլա: Ես պզտիկ մանչ մըն էի, երբ քեռի Արամի քով մարդիկ եկան եւ փարայ կժողվէին: Ըսաւ՝ «Ինչու՞ համար է», ըսին՝ որբերու: Առին գացին: Անցան տարիներ, նորէն եկան, նորէն հարցուց, ըսին՝ որբերու համար է: Քեռի Արամը ըսավ. «Է՛, այդ որբերը չմեծցա՞ն»: Եվ ահա, ես շատ ուրախ եմ, որ այդ որբերը շատ ու շատ են մեծցեր ու անոնցմէ շատերը այսօր Ձեզի հետ հայոց դպրոցի, հայոց միութիւններու մասին կը հոգան»<sup>11</sup> (Ընդգծումները մերն են - Ռ. Մ.):

ՀԲԸՄ-ն և Սփյուռքի կոմիտեն միավորել էին իրենց ջանքերը հանուն հայապահպանման մեծ նպատակի:

1971 թ. Իրաք (Բաղդադ) են այցելում Ալ. Կիրակոսյանը և ՀԿԿ Երեվանի քաղկոմի քարտուղար Կարեն Դեմիրճյանը: Նրանք հանդիպում են տեղի հայ երիտասարդների հետ, պատմում մայր հայրենիքի մասին<sup>12</sup>:

Սփյուռքահայության կոմիտեի կարևորագույն գործերից մեկն էլ սփյուռքահայ տարբեր շրջանների դպրոցների համար դասագրքեր հրատարակելն ու ուղարկելն էր (անվճար): Ամեն տարի հայրենիքում երկամսյա վերապատրաստման դասընթացներ էին անցնում սփյուռքահայ ուսուցիչներ: Բավական է նշել, որ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն իր սկզբնավորումից մինչև 1969 թվականը Սփյուռքի հայ վարժարաններ է ուղարկել 18 լաբորատորիաներ, հազարավոր դասագրքեր, կինոապարատներ, 100 հազ. կտոր պատմական, գեղարվեստական մանկական և տարաբնույթ այլ գրքեր, կինոֆիլմեր, դաշնամուրներ և երաժշտական այլ գործիքներ, թերթեր, ամսագրեր, այն ամենը, ինչը օգնում է ուսումնական գործընթացի կազմակերպմանը<sup>13</sup>: Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի կողմից գնահատելի օգնություն էր լուսավորության նախարարության հետ մեկտեղ մի շարք վարժարանների՝ ֆիզիկայի, քիմիայի և բնագիտության լաբորատորիաների առաքումը: Այդպիսի լաբորատորիաներ ուղարկվել են Եզիպտոսի, Բեյրութի, Հալեպի և այլ վայրերի հայկական վարժարաններ:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի՝ հայապահպանությանը միտված աշխատանքների առանձնահատուկ կողմերից մեկն էլ այն էր, որ նա այն իրականացնում էր հայրենակցական, մշակութային տարբեր միությունների և ընկերությունների հետ համատեղ: Կոմիտեն սերտ կապի մեջ էր ավելի քան 70 հայրենակցական միությունների, դրրանց մասնաճյուղերի և 100-ից ավելի մշակութային կազմակերպությունների հետ: Այդ կազմակերպությունների շնորհիվ էին Սփյուռքի շատ գաղթօջախներում պահպանվում հայ դպրոցը, եկեղեցին և մամուլը:

Իրավացի է Հ. Մելիքսեթյանը, երբ գրում է. «Հայրենակցականների դերի ու հեղինակության մեծացման գործում կարևոր նշանակություն

<sup>11</sup> **Համազասպյան Վ.**, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը և Հայաստանը, Ե., 2001, էջ 249:

<sup>12</sup> **Կիրակոսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 148-151:

<sup>13</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 43, թթ. 25-26:

ունեցավ հատկապես վերածնված հայրենիքում Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի հայկական բնակավայրերի անուններով ավանների, թաղամասերի և փողոցների անվանակոչումը»<sup>14</sup>:

Եվ պատահական չէ, որ 1980-ական թթ. սկզբին հայրենակցական միությունները կայուն բարեկամություն են հաստատում հանրապետության մի շարք ավանների, ուսումնական ու գիտական հաստատությունների և առողջապահական հիմնարկների հետ, նրանց համար կատարում մի քանի հարյուր հազար դոլարի հանգանակություններ: Արաբկիրի, Մալաթիայի, Սեբաստիայի, Խարբերդի, Եվդոկիայի, Մարաշի, Ջեյթունի, Կեսարիայի, Այնթապի և բազմաթիվ այլ հայրենակցական միություններ կարծես մրցակցության մեջ են մտնում միմյանց հետ՝ հայրենանվեր ծրագրեր իրականացնելու ուղղությամբ: Փաստորեն, օգնությունը փոխադարձ էր: Հայրենակցական միություններն ունեին նաև մշակութային մեկ այլ կարևոր դերակատարություն: Նրանց ներկայացուցիչները Հայաստան այցելելիս իրենց հետ բերում էին հայկական պատմական այն շրջաններին վերաբերող նյութեր, որտեղից սերում էին հայրենակցական միությունների անդամները: Այդ նյութերի հավաքման և ամբողջացման շնորհիվ է, որ ի հայտ եկան այնպիսի կարևորագույն աշխատություններ, ինչպիսիք են՝ «Պատմութիւն Մալաթիոյ հայոցը», «Պատմութիւն Եվդոկիոյ հայոցը», «Պատմութիւն Չարսանձակին», «Պատմութիւն Այնթապի հայոցը» և այլ գործեր:

1960-ական թթ. վերջերից սկսած՝ էլ ավելի էին սերտանում կապերը Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի և ՀԲԸՄ-ի միջև: Այդ մասին վկայող՝ Փարիզում տեղի ունեցած մի իրադարձության արդեն վերևում անդրադարձանք: ՀԲԸՄ-ը դեռևս 1960-ական թթ. երկրորդ կեսից գործել է մի սկզբունքով, որի մասին կազմապերպության նախագահ Ալեք Մանուկյանն 1982 թ. նոյեմբերին էջմիածնում ասել է. «Մենք արտասահմանի մեջ քաղաքական եւ գաղափարական տարբեր դրութեան մը ներքեւ կ'ապրինք, սակայն չենք կրնար քաղաքական ժամանակաւոր չափանիշներով դատել Հայաստանի գոյութեան իմաստը: Մեզի համար ամենէն թանկագինն ու նուիրականը հայրենիքի կենդանի գոյութիւնն է, եւ այդ երեւոյթը մենք կը տեսնենք մեր պատմական ընթացքին մէջ»<sup>15</sup>:

Սփյուռքի նկատմամբ Խորհրդային Հայաստանի ունեցած մշակութային նպատակադրումների իրականացման գործում մեծ դերակատարում ունեցան այնտեղ գործող մշակութային, կրթական զանազան միություններ: Դրանցից էին Ֆրանսահայ մշակութային միությունը, Միլանի և Լոնդոնի հայ մշակույթի տները, Թեքեյան մշակութային միությունը, Նոր սերունդ մշակութային-կրթական միությունը, Արգենտինահայ մշակութային միությունը և այլն: Նշված միությունները հետապնդում էին հիմնական երկու նպատակ. առաջինը՝ վառ պահել ազգային ոգին մայր հայրենիքից հեռու գտնվող հայության սրտերում, և երկրորդը՝ Հայաստանի նվաճումների քարոզչությամբ արթնացնել սեր հայրենիքի նկատմամբ, ցույց տալ, որ աշխարհասփյուռ հայությունն ունի իր մայր հայրենիքը:

<sup>14</sup> Մելիքսեյան Ն., նշվ. աշխ., էջ 400:

<sup>15</sup> Թորաննան Թ., Վ.Բ.Ը. Միութիւնը հայութեան ծնունդ՝ ժառայութեան մէջ ամբողջ հայութեան, Պէլրոթ, 1984, էջ 98:

Հայ մշակույթը քարոզելու առումով կարևոր նշանակություն ունեցան ամերիկահայ գրող Լևոն-Ջավեն Սյուրմեյանի կողմից «Մասնա ծներ» էպոսի անգլերեն թարգմանությունը, որը առաջին անգամ լույս տեսավ ԱՄՆ-ում դեռևս 1964 թ., իսկ 1966-ին Անգլիայում հայ ժողովրդական հեքիաթների՝ «Անմահության խնձորներ» հավաքածուի (1968 թ., ԱՄՆ և Անգլիա) հրատարակությունը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորությամբ: Ինքնատիպ են և ճիշտ մեր ազգային էպոսի մասին Վ.- Ջ. Սյուրմեյանի արտահայտած հետևյալ մտքերը. «Ինչ խոսք, ճարտասանական առումով, անգրագետ հայ գեղջուկները զիջում են Հոմերոսին, սակայն, իր բոլոր թերություններով հանդերձ, մեր հերոսավեպը ցնցում է ինձ իր կենդանի պատկերներով: Իսկ «Ռոլանդի երգը» և «Բեովուլֆը» կամ «Ասք Իգորի արշավանքի մասին» վեպերը, չնայած իրենց բանաստեղծական հմայքին, իրադարձությունների հարստությամբ և նշանակությամբ զիջում են «Մասունցի Դավիթին»<sup>16</sup>: «Մասունցի Դավիթ» էպոսը Միշա Գյուտյանի կողմից լույս է տեսնում նաև Լոնդոնում: Նա նաև իր իսկ հիմնած «Մաշտոց» հրատարակչության միջոցով լույս է ընծայում «Լոռվա երգիչը» գիրքը՝ նվիրված Հովհ. Թումանյանին, ինչպես նաև այլ գործեր:

1960-ական թթ. երկրորդ կեսից մինչև 1980-ական թթ. (թերևս մինչև 1988 թ.) աշխարհի տարբեր երկրներում (ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, ԳՖՀ, Իտալիա, ԳԴՀ, Չեխոսլովակիա, Բուլղարիա, Ռումինիա, Ավստրիա և այլն) աննախադեպ հետաքրքրություն է առաջանում հայ արվեստի նկատմամբ, զարգանում է հայագիտությունը: Դրան նպաստում են նաև հայ արվեստին նվիրված ցուցահանդեսների կազմակերպումը Հռոմում, Վենետիկում, Միլանում, Վիեննայում, Բուենոս-Այրեսում, Լիսաբոնում, Բեյրութում և այլուր:

1975 թ. հունիսին Իտալիայի Բերգամո քաղաքում տեղի է ունենում հայ արվեստին նվիրված առաջին միջազգային գիտաժողովը, որի աշխատանքներին մասնակցում են 14 երկրների 120 գիտնականներ, այդ թվում՝ ՀԽՍՀ ԳԱ ներկայացուցիչներ՝ Վ. Համբարձումյանի գլխավորությամբ, ինչպես նաև Վ. Համազասպյանը: Գիտաժողովի օրերին բացվում է IV-XVIII դդ. հայ ճարտարապետությանը նվիրված ցուցահանդես<sup>17</sup>:

1977 թ. խորհրդային կարգերի հաստատման 60-ամյակի առթիվ մեծ ցուցահանդես է կազմակերպվում Լոս Անջելեսում: Առանձին տաղավարներով ներկայացվում են Ուկրաինան և Հայաստանը: Լոս Անջելեսում ցուցահանդեսը շարունակվում է 10 օր, որից հետո տեղափոխվում է ԱՄՆ-ի արևելյան մասի հայաշատ քաղաքները՝ Չիկագո, Բոստոն, Նյու Յորք:

1978 թ. սեպտեմբերին Երևանում տեղի է ունենում հայ արվեստին նվիրված երկրորդ միջազգային գիտաժողովը: Գիտաժողովին մասնակցում են Խորհրդային Միության 12 քաղաքների և արտասահմանյան 19 երկրների ներկայացուցիչներ: Գիտաժողովում լսվում են 138 զեկուցումներ: Հռոմի համալսարանի պրոֆեսոր Պ. Կունեոն զեկուցում է կարդում միջնադարյան հայ քաղաքաշինության մասին: Պրոֆեսոր Օ. Բ. Պոդոբե-

<sup>16</sup> **Հայրյան Գ., Ասմարյան Հ., Մաքսապետյան Մ.**, Սփյուռքահայ գրողներ, Գիրք 1, Ե., 1990, էջ 345:

<sup>17</sup> *Sibiu* Սովետական Հայաստան, N 12, 1978, էջ 11-17 և էջ 24-25:

դովան արձարծում է «Միջնադարյան ձեռագրերի նկարագարդման սրբապատկերային աղբյուրների հարցերը»<sup>18</sup>:

1978 թ. հայ երաժշտության փառատուն-գիտաժողով է տեղի ունենում Լոնդոնում: Այնտեղ հետաքրքրական զեկուցումներ են հնչում՝ կապված հայ երաժշտական արվեստի հետ: Գիտաժողովում հանդես են գալիս խորհրդահայ և սփյուռքահայ ստեղծագործողներ, այդ թվում՝ Է. Միրզոյանը, Ալան Հովհաննեսը, Հովհ. Չեքիջյանը, Լ. Ճգնավորյանը, Լ. Չաքարյանը, Լ. Չիլինգարյանը և ուրիշներ<sup>19</sup>:

Հայ արվեստին նվիրված երրորդ միջազգային գիտաժողովը տեղի է ունենում 1981 թ. սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 1-ը Իտալիայի Միլան, Վիչենցա և Վենետիկ քաղաքներում: Այն կազմակերպվում է Միլանի Հայ մշակույթի կենտրոնի, ՀԽՍՀ ԳԱ-ի և Վենետիկի Մխիթարյանների համագործակցությամբ:

Մայր Հայաստանի և Սփյուռքի հարաբերություններում նշանակալից իրադարձություն էր 1980 թ. նոյեմբերի 24-ին ՀԽՍՀ ԳԱ դահլիճում բացված սփյուռքահայ ներկայացուցիչների ժողովը: Ժողովի նշանաբանն էր՝ «Վերածնված հայրենիքը և սփյուռքը, պայքար հանուն խաղաղության և առաջադիմության»: Ժողովը նախաձեռնել էր Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն: Մասնակիցների թվում էին հանրապետության հասարակայնության ներկայացուցիչներ և մշակույթի գործիչներ: Ժողովը բացում է ՀԽՍՀ ԳԱ պրեզիդենտ, նախապատրաստական կոմիտեի նախագահ Վ. Համբարձումյանը, որը մասնավորապես նըշում է. «Ընդունված է ասել, որ հայ ժողովուրդը աշխարհի ամենահին ժողովուրդներից մեկն է, և դա ճիշտ է: Բայց միևնույն ժամանակ հայ ժողովուրդը ամենաերիտասարդ ժողովուրդներից մեկն է, որովհետև ապացուցեց, որ կարող է հաղթահարել հինը, հասկանալ նորը և նոր ուղիներ հարթել, նոր էջեր գրել պատմության դարավոր գրքում»<sup>20</sup>:

Հայրենիք-Սփյուռք մշակութային կապերի սերտացմանը նպաստում էին նաև թատերախմբերի և երգի-պարի խմբերի պարբերական ելույթները Հայաստանում և հայ համայնքներում: Հայրենիքում հյուրախաղերով հանդես եկած սփյուռքահայ խմբերից հարկ է հիշատակել Բեյրութի ՀԲԸՄ-ի Հայ երիտասարդաց ընկերության «Վահրամ Փափազյան» թատերախումբը, Սոֆիայի, Պլովդիվի քառաձայն երգչախումբը, Վառնայի, Շումենի երգի-պարի խումբը և այլն: Իսկ Հայաստանից սփյուռքահայ տարբեր շրջանակներում հյուրախաղերով մշտապես հանդես են եկել Թ. Ալթունյանի անվան երգի-պարի պետական անսամբլը (Սիրիա, Լիբանան), պետական պարի անսամբլը (Ֆրանսիա, ԱՄՆ, Իրան, աֆրիկյան երկրներ և այլն), Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնը (Սիրիա, Լիբանան, Բուլղարիա), բազմաթիվ մենակատարներ:

Թաթուլ Ալթունյանի անվան երգի-պարի անսամբլի 1979 թ. նոյեմբերի 22-ին Փարիզի «Պլեյել» սրահում տված մի համերգի և դրա ունեցած ոգևորիչ ազդեցության մասին բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը գրել է. «Մեր հոգեկան ներուժության կենտրոնացումի, վերածնված

<sup>18</sup> Հայրենիքի ձայն, 20.IX.1978:

<sup>19</sup> Նույն տեղում, 25.X.1978:

<sup>20</sup> Սովետական Հայաստան, 25.XI.1980:



Հայաստանից եկող և փոխադարձ հոգևոր կապի գորեղ մի արտահայտություն էր Փարիզի «Պլեյել» դահլիճում կատարվածը»<sup>21</sup>:

Հարկ է նաև նշել, որ հայկական մշակույթի զարգացման, Հայրենիք-Սփյուռք մշակութային կապերի ամրապնդման առումով մեծ ջանքեր էր գործադրում Հայ եկեղեցին երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսի գահակալման շրջանում, հատկապես 1970-ական թթ. սկսած՝ մինչև Խորհրդային Միության անկումը:

Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների սերտացմանը նպաստեց Հայոց մեծ եղեռնի 60-ամյա տարելիցի նշումը և պաշտոնական գնահատումը 1975 թ. ապրիլի 24-ին: Այն փաստորեն հայրենիքի և Սփյուռքի՝ Հայ դատի լուծման շուրջը միավորվելու ազդակ հանդիսացավ: 1975 թ. ապրիլի 14-ին ՀԿԿ Կենտկոմի բյուրոն որոշում է ընդունում «1915 թ. հայերի ցեղասպանության 60-ամյակի կապակցությամբ միջոցառումների մասին», որում մասնավորապես նշվում էր. «1. Հանրապետական հեռուստատեսությամբ և ռադիոհեռարձակման ցանցով ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Կ. Ս. Դեմիրճյանի ելույթը նպատակահարմար համարել: Հաստատել ելույթի տեքստը: 2. ՀԿԿ Կենտկոմի, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության և Մինիստրների խորհրդի կողմից Ծիծեռնակաբերդի հուշարձանին ծաղկեպսակ դնել: 3. Նպատակահարմար համարել ապրիլի 24-ին ժամը 19.00-ին հեռուստատեսությամբ և ռադիոյով ցեղասպանության զոհերի հիշատակը հարգել մեկ րոպե լռությամբ: 4. Հանրապետական թերթերում և ամսագրերում այդ տարեթվին նվիրված հոդվածներ հրապարակել»<sup>22</sup>:

Կ. Դեմիրճյանի ելույթը, որն աննախադեպ էր, հասկանալի պատճառներով ժամանակի թերթերը չեն տպագրել: Այդ ելույթում կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղարը առաջին անգամ հրապարակավ քննադատում էր Օսմանյան կայսրության քաղաքականությունը արևմտահայության նկատմամբ, որին զոհ գնացին 1.5 մլն մարդիկ: Աննախադեպ էին նաև լռության րոպեն և ողջ ղեկավարության ու ժողովրդի երթը դեպի Ծիծեռնակաբերդ: «Առաջին անգամ էր,- գրում է Կ. Դավլաթյանը,- որ Հայաստանի բարձրագույն ղեկավարությունը այցելեց Եղեռնի հուշարձանին, ծաղկեպսակներ դրեց: Դա էլ դարձավ ավանդույթի սկիզբը, երբ հետագա բոլոր տարիներին ղեկավարությունը ժողովրդի հետ միասին ծաղիկներ էր դնում անմեղ զոհերի հիշատակին»<sup>23</sup>:

1988 թ. Հայաստանում սկզբնավորած ազատագրական զարթոնքը, պետք է նշել, որ միանգամայն այլ հարթություն տեղափոխեց Հայրենիք-Սփյուռք փոխհարաբերությունները: Հայությունն այս անգամ միավորվեց արցախյան դատի լուծման, Հայաստանի քաղաքական հեռանկարի մատնանշման խնդիրների շուրջ: 1988 թ. դեկտեմբերյան երկրաշարժը այն հետևանքը ունեցավ նաև, որ Սփյուռքը հայրենիքի նկատմամբ որդեգրեց նոր մոտեցում, որը արտահայտվում էր մարդասիրական օգնությամբ: Ավելի սերտացան հարաբերությունները ՀԲԸՄ-ի, Թեքեյան մշա-

<sup>21</sup> Կապուտիկյան Ս., Գույներ նույն խճանկարից, Ե., 1989, էջ 82:

<sup>22</sup> ՀԱՍ, ֆ. 1, գ. 55, գ. 32, թ. 2-3:

<sup>23</sup> Դավլաթյան Կ., Հուշապատում (դնմքեր, իրողություններ, մտորումներ), Ե., 1998, էջ 191:

կուրսային միության և բազմաթիվ այլ մշակութային և բարեգործական կազմակերպությունների, մշակութային գործիչների հետ: Արդեն 1988 թ. հետո այս կազմակերպությունների՝ Հայաստանում ծավալված գործունեությունը կարելի է նաև որակել ոչ միայն մշակութային, այլև քաղաքական:

Խորհրդային Հայաստանում ուսումնասիրված ժամանակահատվածում Հայրենիք-Սփյուռք մշակութային հարաբերությունները ապրում էին զարգացման վերելքային շրջան, և այդ հարաբերությունների հիմքում ընկած էին՝ ա) Հայաստանի խորհրդային ղեկավարության կողմից աշխարհասփյուռ հայությանը ազգային ակունքներին մոտեցնելու, ձուլման վտանգից զերծ պահելու ձգտումը. բ) Խորհրդային Հայաստանի՝ որպես համայն հայության հայրենիքի և միավորման ու համախմբման կենտրոնի նկատմամբ հավատի ձևավորումը. գ) համոզմունքի ձևավորումը, որ ազգի ինքնության պահպանման ամենակարևոր երաշխիքներից մեկը ազգային ավանդույթների հիմքի վրա մշակութային զարգացումն է:

### **КУЛЬТУРНЫЕ СВЯЗИ РОДИНА-ДИАСПОРА В 1966-1990 ГОДЫ**

МИРЗАХАНИЯН Р. К.

#### **Резюме**

Культурные связи Родина-диаспора координировались Комитетом по культурным связям с диаспорой. Со стороны государства по каналам вышеназванного комитета осуществлялась целостная программа помощи армянским школам зарубежья: для диаспоры издавались учебники и ей оказывалась всяческая материально-техническая помощь. В Армении ежегодно проводились занятия для преподавателей школ диаспоры. В 1975 году в Армении и во всех армянских колониях была отмечена трагическая для армянского народа дата – 60-летие геноцида армян, и впервые на государственном уровне была подвергнута резкой критике преступная политика Османской империи. Фактическое признание геноцида со стороны руководства Советской Армении способствовало сплочению армян, проживавших как в Армении, так и за рубежом.